

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները և ջերմ բարեմաղթությունները Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ:

Թող հավետ խաղաղ ու շեն մնա մեր վերածնված Մայր երկիրը և հարատև վերելքով ծաղկի ու զորանա սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Հարգալից ողջունիվ,

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷՋՄԻԱԾԻՆ

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձի ուրախ առիթով հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները անձամբ Ձեզ և Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության անդամներին:

Մաղթում ենք, որ վերածնված Մայր երկիրը մեր մշտապես խաղաղ և ապահով աճի ու ծաղկի հերջանկություն հայ ժողովրդի բոլոր զավակների:

Հարգալից ողջունիվ,

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷՋՄԻԱԾԻՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 46-րդ տարեդարձի ուրախ առիթով ընդունեցեք Մեր սրտագին շնորհավորանքներն ու բարի մաղթանքները:

Թող անսասան և շեն մնա ամենայն հայոց Մայր Հայաստանը, համայն աշխարհի խաղաղության պայմաններում:

Սիրով և ողջունիվ,

**ՎԱԶԳԵՆ Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷՋՄԻԱԾԻՆ

***

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հաճեցեք ընդունել Գերագույն սովետի նախագահության անդամների և անձամբ իմ շնորհակալությունը, Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Խորին հարգանքներով,

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

***

Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմագին շնորհավորանքների և լավագույն բարեմաղթությունների համար:

ԲԱԴԱԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ**

ԵՐԵՎԱՆ

***

Հաճեցեք ընդունել Խորհրդիս և անձամբ իմ սրտագին շնորհակալությունը Սովետական Հայաստանի 46-րդ տարեդարձի առթիվ Ձեր հղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

**Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ**

ԵՐԵՎԱՆ